

**ԵՎՐՈՊԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ԴԱՏԱԴԱՐՏԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՉՈՎ ԴԻՄԵԼ Է ՀՀ
ՆԱԽԱԳԱՀԻՆ**

19.06.2023 10:05



Օրեր առաջ ՀՀ փաստաբանների պալատը դիմել է միջազգային գործընկերներին՝ վերջիններիս ուշադրությունը հրավիրելով Հայաստանում ոստիկանության աշխատակիցների կողմից փաստաբանին բռնության ենթարկվելու դեպքին:

Ի պատասխան, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE) անդրադառնալով 2023թ ընթացքում տեղի ունեցած երկու դեպքերին, խստորեն դատապարտել է փաստաբանների նկատմամբ բռնություններն ու կոչով դիմել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին:

Գրության մեջ մասնավորապես նշված է.

«Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը խստորեն դատապարտում է վերոհիշյալ փաստաբանների նկատմամբ բռնության այս գործողությունները, և հորդորում է Ձերդ գերազանցությանը անել հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու այդ բռնության դեպքերի լիարժեք և անաչառ քննությունը՝ պատասխանատուներին միջազգային չափանիշներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ի լրումն, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը ցանկանում է հիշեցնել, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ չվախենալով հաշվեհարդարից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ ոտնձգություններից՝ պահպանելու արդարադատության իրականացման և օրենքի գերակայության անկախությունն ու ամբողջականությունը»,-
ասված է ՀՀ նախագահին ուղղված ուղերձում:

Ստորև ներկայացնում ենք Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) պաշտոնական գրությունն անգլերեն լեզվով և ոչ պաշտոնական թարգմանությունը հայերեն լեզվով.

**ԲԵՌՆԵԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ
ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ**

ԲԵՌՆԵԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```